

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ԴՊԻՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ

(1620? - 1691?)

ԺԷ. Դարու հայ մշակոյթի բազմա-
վաստակ գործիչներէն մին է Հայրապետ
Դպիր: Ծնած է մօտաւորապէս 1620 թը-
ւին: Ամուսնացած էր Աննայի հետ և ու-
նէր երկու որդիներ՝ Աղայան և Սարգիս
(1661): Ունեցած է նաև աշակերտներ,
ինչպէս Նահապետ և Յակոբ (1635):

Իր գործունէութիւնը կը տարածուի
Պաւլի քան կէս դար տևող ժամանակա-
միջոցի մը վրայ (1639 - 1691):

Հայրապետ Դպիր աշխատած է Նոր
Ջուղայի մէջ, առաւելապէս իբրև ծաղկող
քան գրիչ: Իր գործերուն թիւը երեք
ասանկանէն աւելի է:

Ստորև կը ներկայացնենք իր աշխա-
տանքը, ըստ կարեւորոյն ժամանակագրա-
կան կարգով:

1. — Աւետարան մը, գրուած 1418ին,
նորոգուած է 1639ին, Բաղդասար Վրդ.
Ջուղայեցիի կողմէ. այդ տարին Հայրա-
պետ նկարիչ կատարած է ծաղկումը. —
Ձեռ. Երևանի, թիւ 7224:

2. — Գործողիքը, 1641ին գրուած
Բաղդասար Վարդապետի և Անտոն Դպիր
ձեռքով: Նկարող՝ Յոհան Գահանայ: Ծաղ-
կող՝ Հայրապետ Դպիր: Ստացող՝ Բաղդա-
սար Վրդ. — Ձեռ. Վիեննայի, թ. 1208:

3. — 1642, Մեկնութիւն Մատթէի և
Յովհաննու՝ Գր. Տաթևացիի, Գրիչը՝ Ան-
տոն Ջուղայեցիի և Մարգարէ: Ծաղկող՝
Հայրապետ, Ստացող՝ Պաղտատար Վար-
դապետ. — Ձեռ. Երևանի, թ. 1260:

4. — 1642 - 1645, Աստուածաշունչ,
Գրիչ՝ Աստուածատուր Դպիր: Նկարիչ՝
Հայրապետ Դպիր: Ստացող՝ Ջոհրապ Ե-
րևանցի. — Ձեռ. Ս. Յ. թիւ 1933:

5. — 1643 - 1646, Աստուածաշունչ,
Գրիչ՝ Ստեփանոս, որդի Մարտիրոսի,
Ուղղիչ՝ Գրիգոր Գահանայ: Ծաղկող՝ Հայ-
րապետ, ըստ երևոյթի: Ստացող՝ Սաֆար
Ամիրսաթեան. — Ձեռ. Ս. Յ., թ. 1934:

6. — Խորհրդատուր, 1647: Գրիչ՝
Աստուածատուր: Ծաղկող՝ Հայրապետ Ջու-

Հ Ո Գ Ի Ս Պ Ա Ր Ս Պ Ե Ա Ն

Տէ՛րը թէ բախսն, չեմ գիտեր, ու չեմ փորձեր իսկ գիտնալ,
Անգթօրէն, ուժգնօրէն խառազանեց իմ հոգին.

Այդ հարուածէն դեռ երբեմն կ'արիւնի տեղը վերին,
Թէեւ վարդ մը կը ճգնի հոն իր թերթերը բանալ...

Վարդ մը կարմիր, համազոյն վերին վրայ, վերին մօտ,
Ի՛նչ կախարդիչ բայց նաեւ ի՛նչ արտառուչ ալ պոսիկեր.
Կը սպիանայ վերք բայց, կը կոցրնէ վարդն իր հոտ.
Վիւսն այդ բազմած արեւն ներս իցի՛ւ մնաւ անընկալ...

Ա՛լ ասիկէ ետք ամէն հեղ երբ արիւնն զան հոգիս,
Բախսին նայումսն էիլ ու ծուռ՝ երբ գայ իյնալ իմ վրան,
Վերքն այդ քաց ու անբոյծ կ'ընեմ ինծի ես վահան:

Ա՛լ ի՛նչ ձեռով կեանքն արդեօք պիտի փորձէ ընկնել զիս,
Քանի վիւսին դէմ վիւսով պարսպած եմ իմ հոգին.
Փասքը ամէն չարիքէ հասակ առնող բարիքին:

1981

Գ. ՃԱՐՏԱՐ